Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 նոյեմբերի 2024թ. ք. Եղվարդ

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ տնօրեն Տիգրան Թադևոսյանս ծանոթանալով «ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-13/24» ծածկահիրով հրապարակված գնման գործընթացին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ և «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ միջև 14.05.2024թ. կնքված № ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-13/24-01/044 «ՓԱՅՏԵ ԴԵՏԱԼՆԵՐ»-Ի մատակարարման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) համաձայն «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է փուլային մատակարարման եղանակով «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ին մատակարարել Պայմանագրի մատակարարման ժամանակացույցով սահմանված քանակներով ապրանքները, սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում մատակարարում չի կատարվել: Արդյունքում «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ն չի մատակարարել 60 (վաթսուն) հատ բռնակի վերադիր և 1 (մեկ) հատ խզակոթ, ինչպես նաև նոյեմբեր ամսվա ընթացքում պետք է մատակարարվեր ևս 50 (հիսուն) բռնակի վերադիր և 5 (հինգ) խզակոթ, սակայն մինչ 21.11.2024թ. էականորեն խախտել է Պայմանագիրը և որևէ ապրանք չի մատակարարվել, :

21.11.2024թ. «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ Պայմանագրի 2.1.7 կետի հիմքով միակողմանի լուծել է «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ 14.05.2024թ. կնքված № ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-13/24-01/044 «ՓԱՅՏԵ ԴԵՏԱԼՆԵՐ»-Ի մատակարարման պայմանագիրը:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա-ենթակետով և 2-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված մարմնի կողմից մասնակցին տրամադրելու օրվանից:

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ տնօրեն Տ. Թադևոսյան